ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2024 թվականի N 1188 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 847-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԼԵՔՍ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 847-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածի ցանկը 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-10-րդ կետերով.

«	9.	4819200000	Ծալովի ստվարաթղթե տուփեր, արկղեր և տուփեր ծալքավոր թղթից կամ ստվարաթղթից	Ստվարաթղթե տուփեր, արկղեր, տուփեր, պարկեր, թղթե տոպրակներ և փաթեթավորման այլ տարաներ՝ թղթից, ստվարաթղթից, թաղանթանյութի բամբակից կամ թաղանթանյութի մանրաթելերից պատրաստված քաթանից, քարտարկղեր, նամակարկղեր և նույնանման արտադրատեսակների՝ թղթից կամ ստվարաթղթից, որոնք օգտագործվում են հիմնարկներում, խանութներում կամ նույնանման նպատակներով Ծալովի ստվարաթղթե տուփեր, արկղեր ու տուփեր ծալքավոր	կգ	600 000	Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Բուլղարիա, Հունաստան, Շվեյցարիա, Իտալիա, ԵՄ երկրներ, Հորդանան, ԱՄԷ, ԱՄՆ, Չինաստան, Իրան	Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Բուլղարիա, Հունաստան, Շվեյցարիա, Իտալիա, ԵՄ երկրներ, Հորդանան, ԱՄԷ, ԱՄՆ, Չինաստան, Իրան	1 375 000 000	

			թղթից կամ ստվարաթղթից						
10.	4819500000	Սիգարետի ստվարաթղթե տուփեր՝ կտրված ըստ բարդ երկրաչափական հատվածի չափի, ծալման գծերի առկայությամբ, մեկից ավելի կողմից սոսնձով ամրացվող	Ստվարաթղթե տուփ սիգարետի համար, դատարկ, նախատեսված է ծխախոտի փաթեթավորման համար, օֆսեթ տպման եղանակով նախշի և հարդարման կիրառմամբ, կտրված բարդ երկրաչափական հատվածի չափով, ծալման գծերի առկայությամբ, փաթեթավորումը պատրաստի օգտագործման տուփի վերածելու համար	կգ	1 600 000	Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Բուլղարիա, Հունաստան, Շվեյցարիա, Իտալիա, ԵՄ երկրներ, Հորդանան, ԱՄԷ, ԱՄՆ, Չինաստան, Իրան	Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Բուլղարիա, Հունաստան, Շվեյցարիա, Իտալիա, ԵՄ երկրներ, Հորդանան, ԱՄԷ, ԱՄՆ, Չինաստան, Իրան	3 667 000 000	

».

2) հավելվածի ցանկի «Ընդամենը» պարբերությունում «31 100 118 580» թիվը փոխարինել «36 142 118 580» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

01.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ